**Արձանագրություն N 2-1**

**ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/15 ՀՀ Շիրակի մարզի գ. Բերդաշենի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 26.08.2025թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Զարգարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Նունյան
Ա. Աչոյան
Հ. Քանանյան
Ա. Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Հակոբյան

**1.Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

(Հ. Զարգարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2025 թվականի օգոստոսի 26-ին, ժամը 11:30-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիում | **567 994 640** | 519 828 400 | 103 965 680 | 623 794 080 |

Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

## 2. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ. հասցեն

---

(Հ. Զարգարյան)

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե | Կապի միջոց | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «ՇԻՆ» ՍՊԸ և «Գառնի Շին» ՍՊԸ կոնսորցիում | ք. Եևրան, Եկմալյան փ., շ. 6/55 Կոտայքի մարզ, գ. Գառնի, Վ. Համբարձումյան փ. , տ. 29 | 055 90 00 50, 077 60 80 35 | aramarami2020@mail.ru, vahag-222@mail.ru, |

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

## 3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Հ. Զարգարյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ և հրավերի 8.21 կետերը՝ մասնակցի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց հարցում կատարել՝

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջինիս կողմից վերահսկվող եկամուտների գծով 500 000 ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին,
2. ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն միջին շրջանառությունը գնման գնի 100 տոկոսից պակաս չլինելու մասին,
3. Պաշտպանության և ԿԳՄՍ նախարարություններ, ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամ, Երևանի քաղաքապետարան՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ վերջին 3 տարիների ընթացքում 5 000 000 ՀՀ դրամի չափով նախկին պայմանագրային պարտավորությունների ընթացքում պատվիրատուի կողմից սահմանված տույժ և (կամ) տուգանք չունենալու մասին:

3.2 Հայտերի գնահատման նիստը հրավիրել իրավասու մարմինների կողմից եզրակացությունները ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:30-ին, ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------------------------- Հ. Զարգարյան

Անդամ՝ ---------------------------------------- Ս. Նունյան

---------------------------------------- Ա. Աչոյան

---------------------------------------- Հ. Քանանյան

---------------------------------------- Ա. Խաչատրյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Գ. Հակոբյան